ՀԱՍԱՆ ՋԵՄԱԼ

1915թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՆՏ ԴԻՆՔ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հրանտ Դինք Հիմնադրամը հիմնվել է 2007թ. հունվարի 19-ին, իր «Ակոս» թերթի խմբագրության դիմաց Հրանտ Դինքի սպանությունից հետո, որպեսզի նման ցավերը չկրկնվեն և որպեսզի Հրանտ Դինքի ժառանգությունը, նրա լեզուն, նրա սիրտը և ավելի ազատ ու արդար աշխարհ տեսնելու նրա երազանքները շարունակություն ունենան: Ժողովրդավարություն և հավասար իրավունքներ բոլորի համար՝ անկախ նրանց ազգային կրոնական, մշակութային պատկանելության կամ սեռի – սա է հիմնադրամի գլխավոր սկզբունքը:

Հիմնադրամն աշխատում է այնպիսի Թուրքիայի և աշխարհի համար, որտեղ արտահայտվելու ազատությունը սահմաններ չունի, որտեղ բոլոր տարբերությունները թույլատրելի են, գնահատվում են և բազմապատկվում, և որտեղ ներկա օրվա և անցյալի վերաբերյալ մեր հայացքներում գերակշռում է խիղճը: Հրանտ Դինք Հիմնադրամում «պայքարում ենք հանուն» այնպիսի ապագայի, որտեղ իշխում են մշակութային երկխոսությունը, խաղաղությունը և կարեկցանքը:

Հասան Ջեմալ

Ծնվել է 1944թ. Ստամբուլում: Սովորել է Անկարայի Աթաթուրքի անվան լիցեյում, որն ավարտելուց հետո ընդունվել է Անկարայի համալսարանի քաղաքագիտության ֆակուլտետ, որն էլ ավարտել է 1965թ.: Այնուհետև մեկ ու կես տարի անցկացրել է Գերմանիայում, երկու տարի ծառայել բանակում որպես պահեստազորային սպա, իսկ 1969թ. սկսել է աշխատել Դողան Ավջըօղլուի մոտ, «*Դևրիմ*» (Հեղափոխություն) ամսագրում՝ որպես խմբագիր: Մարտի 12-ի զինվորական միջամտությունից հետո «*Դևրիմը*» փակվում է, և նա դատապարտվում է 44 ամսվա բանտարկության, որից հետո սկսվում է «փախստական» շրջանը:
1971-ին կարճ ժամանակահատված աշխատում է «*Յենի օրթամ*» (Նոր միջավայր) ամսագրում: Ալթան Օյմենի հիմնած *ANKA* լրատվական գործակալությունում առաջին քայլերն է արել թղթակցության ասպարեզում: *ANKA*-ում աշխատելիս աջակցել է Օրսան Օյմենի ղեկավարած Գերմանական լրատվական գործակալության *DPA*-ին, արևմտագերմանական ռադիոյին՝ *WDR*-ին և «*Թուփլում*» (Հասարակություն) ամսագրին: «*Գյունայդըն*» (Բարի լույս) թերթում Նեջաթի Ձինջիրքըրանի հետ աշխատելիս սկսել է յուրացնել և՛ թերթային աշխատանքի խոհանոցը, և՛ «գյունայդընական ոճի» լրագրությունը:
1973թ. տեղափոխվել է «*Ջումհուրիյեթ*» (Հանրապետություն) թերթ: 1979-ին եղել է «*Ջումհուրիյեթ*»-ի Անկարայի ներկայացուցիչը, 1981-ին՝ գլխավոր խմբագիրը: 1983-1992թ. եղել է Միջազգային լրագրության ինստիտուտի (*IPI*) գործադիր մարմնի անդամ: 1992-ին որպես հոդվածագիր տեղափոխվել է նախ «*Սաբահ*» (Առավոտ), այնուհետև՝ 1998-ին, «*Միլլիյեթ*» (Ազգ) թերթ, որտեղ էլ ներկայումս շարունակում է գրել:

Հեղինակել է ինը գիրք՝ «*Արթնանալ տանկի ձայնից*», «*Ժողովրդավարության վախը*», «*Որսալ պատմությունը կենդանության օրոք*», «*Պատմվածք Օզալի մասին*», «*Ոչ ոք թող չնեղանա՝ ինքս իմ մասին եմ գրել*», «*Քրդեր*», «*Հանրապետությունը շատ էի սիրել*», «*Թուրքիայի զինվորականության խնդիրը*», «*Քրդական հարցին նոր հայացք. ի պահ խաղաղությանը*»:

1915.
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հասան Ջեմալ

HRANT DİNK VAKFI
HRANT DINK FOUNDATION
ՀՐԱՆԴ ՏԻՆՔ ՀԻՄՆԱՐԿ

© Հրանդ Դինք Հիմնադրամի Հրատարակչություն

Halaskargazi Cad. Sebat Apt.
No 74/1 Osmanbey, Şişli, 34371 İstanbul
T: 0212 240 33 65
F: 0212 240 33 94
info@hrantdink.org
www.hrantdink.org

© 2012 Հասան Ջեմալ - © Գրքի՝ բացի թուրքերեն բնօրինակից, հայերեն և այլ լեզուներով թարգմանության հեղինակային բոլոր իրավունքները պատկանում են Հրանտ Դինք հիմնադրամին: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են: Գիրքն ամբողջությամբ կամ մասամբ արգելված է պատճենահանել և վերատպել առանց հիմնադրամի թույլտվության:

Թարգմանչական խումբ՝
Ռուբեն Մելքոնյան (խմբի ղեկավար)
Անի Դեյիրմենջյան
Անուշիկ Մարտիրոսյան
Նաիրա Պողոսյան
Դիանա Կարապետյան
Տաթևիկ Հակոբյան

Վերջնական ընթերցում՝
Ալին Օզինյան

Կողքի ձեւավորում՝
Բյուլենտ Երկմեն

Էջ II-III, Լուսանկար՝ Գրիգոր Աժտերխանյան
Էջ 288-289, Լուսանկար՝ «Բոլորս Հրանդ Դինք Ենք»
Հրանդ Դինք Հիմնադրամի Հրատարակչություն, 2007

Էջադրություն՝
Մուրադ Գյոզողլու

Տպագրություն՝
"Antares" Media Holding
50a/1 Mashtots Av. Yerevan 0009
T: +37410581059
www.antares.am

Երևան, Դեկտեմբեր 2014

ISBN 978-9939-1-0100-2

Թուրքերենից արևելահայերեն թարգմանության խմբագրումը, տողատակերի ծանոթագրությունները՝ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռուբեն Մելքոնյանի (Ռ.Մ.), իսկ մնացած ծանոթագրությունները հեղինակինն են:

Սիրելի Հրանտ,
ինձ այս գիրքը գրելուն դրդել է
քո ցավը,
քո ցավերը:

Մարդու պայքարն
իշխանությունների դեմ
Հիշողության պայքարն է
մոռացության դեմ:

Միլան Քունդերա

Ազատությունն այն է, որ
կարողանում է մարդկանց ասել
այն, ինչ նրանք չեն ցանկանում
լսել:

Ջորջ Օրուել

Այս գրքի ստեղծմանն ունեցած նպաստի համար շնորհակալություն եմ հայտնում սիրելի ընկերոջս՝ Ալի Բայրամօղլուին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբանի Փոխարեն 1
«Երեկ Ալի Քեմալը, այսօր՝ Հասան Ջեմալը» 5
Հայերը սպանել են Բահադըրին 15
«Թող հայերի աչքերը կուրանան այս թույնի մեջ» 30
Եթե ցանկանում ենք, որ ցեղասպանությունը
խնդիր չդառնա 40
«30 հազար քուրդ, 1 միլիոն հայ է սպանվել» 56
«Ոչ մուսուլմանները սպանվելու են,
իսկ մուսուլմանները՝ մեղադրվելու» 80
«Հասան Ջեմալը բոլոր ոճրագործներին տեսել է» 101
Նրանք, ովքեր ցանկանում են
ապագան խեղդել անցյալում 114
Եթե հույսդ կորցնես, կպարտվես 130
Երևանում, ցեղասպանության հուշահամալիրում,
Հրանտի հետ մեն-մենակ 141
Երևանում հանդիպել Ջեմալ փաշային
սպանողներից մեկի թոռան հետ 150
Քանի դեռ գիշերը քեզ չի պարուրել,
վառիր քո մոմը 166
Ցավերը չի կարելի համեմատել 177
Աթաթուրքը 1915-ի համար ասել է. «Ամոթալի
արարքներ, ստորություն» սակայն 188
«Դինքի սպանությունն Էրգենեքոնի անթերի
իրականացրած գործողություն էր» 208
Ասելո՞ւ եմ ցեղասպանություն, թե՞ ոչ 217
«Անցյալը երբեք չի մահանում,
անցյալն անգամ անցյալ էլ չէ» 233

Թայյիփ Էրդողան. հենց հարցը վերաբերում է 1915-ին՝ դառնալ իթթիհադական 244
Վերջաբանի փոխարեն 254

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ
ՀԱՎԵԼՎԱԾ 1 - Թալեաթ փաշայի վրեժը լուծված է 261
ՀԱՎԵԼՎԱԾ 2 - «Հայ է մայրս» 267
ՀԱՎԵԼՎԱԾ 3 - Թուրքիայի համար գիտակցելու ժամանակը 271
ՀԱՎԵԼՎԱԾ 4 - Քաղաքակրթության կորուստը 274
ՀԱՎԵԼՎԱԾ 5 - Հրանտ Դինքի ընտանիքի բողոքարկման դիմումը Վճռաբեկ դատարան 278

ԻՆԴԵՔՍ 283

Նախաբանի Փոխարեն

Պատմության ձեռքը ճիշտ ճանապարհը ցույց է տալիս նրան, ով ուզում է տեսնել:

Երբ այս գիրքը գրելու համար
նստել էի համակարգչի մոտ,
ինքս ինձ ասացի,
որ հավանաբար իմ կյանքում առանց անցյալի հետ
հաշիվները պարզելու ոչինչ չի լինում:
Հոգումս տարօրինակ զգացողություններ,
հարցականներ արթնացան:
Արդյոք նման մի գիրք գրելը կարո՞ղ էր
համարվել իմ կողմից
«օպորտունիստություն»
կամ էլ «հերոսություն խաղալ»:
Ոմանք իմ մասին
կարո՞ղ էին այդպես մտածել:
Կամ էլ ամեն տարի որոշակի օրերին
դեմքի թախծոտ արտահայտությամբ
«Ակոսի» *միջանցքներում երևալը,*
ամեն հունվարի 19-ի
Հրանտ Դինքի հիշատակի միջոցառումներին,
երթերին մասնակցելը…
Հայերն արդյոք
«Ջեմալ փաշայի թոռան» հետ
իրենց ցավը ցանկանո՞ւմ էին կիսել,
կցանկանայի՞ն:
Չգիտեմ:
Սակայն հետո հիշեցի
Երևանում այն առավոտվա պահը,

երբ արևն,
իր շուրջը կարմիր ներկելով,
մշուշի միջից ծագում էր:
Հայոց ցեղասպանության հուշարձանին
երեք սպիտակ մեխակ դնելիս
ինքս ինձ շշնջացել էի.
«Սիրելի Հրանտ,
ինձ այստեղ քո ցավերն են բերել,
ձգտում եմ հասկանալ
և հոգումս զգալ
քո և քո նախնիների տառապանքները
և կիսում եմ այդ ցավը:
Հանգիստ ննջիր, եղբայրս»:
2008 թվականի սեպտեմբերի
այն երևանյան առավոտը
չեմ կարողանում մոռանալ:
Օրվա առաջին շողերի մեջ
Արարատի,
Աղրը դաղի վեհաշուք գագաթը
մշուշի մեջ մեկ երևում էր,
մեկ կորում:
Այդ առավոտ մի գրառում արեցի.
«Պատմության ձեռքը
ճիշտ ճանապարհը ցույց է տալիս նրան,
ով ուզում է տեսնել»:
1919 թվականին Բրիտանիայի գաղութարար բանակը
Հնդկաստանում
ժողովրդի վրա կրակ էր բացել
և մարդկության նկատմամբ մեղք գործել.
Ամրիթսարի կոտորածն էր արել:
1997թ. Բրիտանիայի թագուհի Եղիսաբեթ 2-րդը
Հնդկաստանի ժողովրդից
ներողություն խնդրելիս ասել էր.
«Ամրիթսարում տեղի ունեցածն աղետ էր,
սակայն պատմությունը փոխել
անհնար է»:
Պատմությունը, իհարկե,
չենք կարող փոխել,
սակայն պատմության հետ առերեսվելը

մեր ձեռքում է:
Առանց անցյալի դառն իրողությունների
հետ առերեսվելու,
հաշիվները պարզելու այդ
ինչպե՞ս ենք առաջանալու դեպի ապագա:
Հնարավոր չէ ցավի հանդեպ լուռ մնալ:
Մենք չենք կարող թույլ տալ,
որ անցյալը գերի վերցնի ներկան:
Բացի այդ, 1915-ի ցավը ոչ թե անցյալին,
այլ ներկային վերաբերող խնդիր է:
Պատմության հետ,
բայց ոչ թե մեզանում տարածված «հնարովի»,
խեղաթյուրված պատմության,
այլ իրական պատմության հետ հաշտվելով
և պատմությունը ստրկացնելու հիվանդությունից ազատվելով
կարող ենք հանգստություն,
խաղաղություն ձեռք բերել:
Ափսոս, որ իրական խաղաղության
և ժողովրդավարության հնարավոր է հասնել
միայն անասելի ցավի միջով անցնելով
և մեծ զոհողությունների շնորհիվ,
ինչպես եղավ Հրանտ Դինքի պարագայում:
Պարզ է,
որ հասարակությունների կյանքում որոշ քարեր
առանց զոհողությունների
տեղից չեն շարժվում
կամ էլ տեղը չեն ընկնում:
Փոլ Օսթերն իր վեպում ասում է.
«Քանի բանը բանից չի անցել,
խոսիր հիմա և խոսելու հույսդ պահիր,
մինչև որ ասելու ոչինչ չմնա:
Ինչ էլ լինի՝
ժամանակն անսահմանափակ չէ»:
Ես էլ նստեցի և սկսեցի գրել գիրքս՝
«մեր կորած պատմության» հետքերով...

Հասան Ջեմալ
Ստամբուլ, 25 փետրվարի 2012թ.